ԳԱՐԵԳԻՆ Բ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՑԱՎԱԿՑԱԿԱՆ ԳԻՐԸ ՏԻԳՐԱՆ ՆԱՂԴԱԼՅԱՆԻ ՄԱՀՎԱՆ ԱՌԻԹՈՎ

ՍԳԱԿԻՐ ՆԱՂԴԱԼՅԱՆ ԸՆՏԱՆԻՔԻՆ

Խոր ցավ և վրդովմունք ապրեցինք՝ տեղեկանալով Հայաստանի Հանրային Հեռուստառադիոընկերության խորհրդի նախագահ, եռանդաշատ ու կարող լրագրող Տիգրան Նաղդալյանի եղերական մահվան մասին: Ահավոր ոճրագործությամբ խռովված է մեր ժողովրդի հոգին:

Հանուն Ամենայն Հայոց Կաթողիկոսության, Գերագույն Հոգևոր Խորհրդի, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանության և բարեպաշտ հավատացելոց՝ Մեր անկեղծ ցավակցությունն ենք բերում հանգուցյալի սգացյալ ընտանիքին, հարազատներին ու գործընկերներին և դատապարտում չարագործ այս բռնարարքը:

Հայրապետիս աղոթքն է առ Բարձրյալն Աստված, որ Տերը խաղաղության ու սիրո մեջ պահի ժողովրդին և Իր գթառատ ողորմածությամբ երկնային երանական բարձունքներում լույսերի մեջ ընդունի ննջեցյալի հոգին: Թող Աստվածային Սուրբ Հոգին մխիթարիչ շնորհներով սփոփի Նաղդալյան վշտակիր ընտանիքի անդամներին:

«Ցիշեսցէ Տէր զհոգի նորոգ հանգուցելոյն եւ հանգուսցէ զնա ի լոյս երեսաց Աստուածութեան Իւրոյ. ամէն»:

Աղոթքով և վշտակցությամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին,
29 դեկտեմբերի 2002 թ.